

«Հագարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի մայիսի 27-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

Նիստին մասնակցում էին հետևյալ Շահառուների խորհրդի անդամները՝

Արթուր Սաքունց	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ
Արայիկ Հովհաննիսյան	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ
Վեհանուշ Հովհաննիսյան	«Մեդվիկ» մանկապատանեկան ՀԿ
Կարեն Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
Աշոտ Ոսկանյան	«Ագրոգարգացում» ՀԿ
Նաիրա Հարությունյան	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամ (<i>Հրաչիկ Ջավադյանի լիազոր ներկայացուցիչ</i>)
Մարինա Նազարյան	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ (<i>Վանիկ Սողոմոնյանի լիազոր ներկայացուցիչ</i>)
Հակոբ Աբրահամյան	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ
Սեյրան Մարտիրոսյան	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ
Լևոն Բարսեղյան	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Վարդան Համբարձումյան	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա» ԻԱՄ

Նիստից բացակայում էին.

Լիլիթ Ավագյան	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ
Վիլիկ Բարսեղյան	«Արարատ» ՋՕԸ
Արամ Սուքիասյան	«Հայաստանի երիտասարդների ազգային խորհուրդ» ՀԿ
Տոնական Ղազարյան	«Շենիկ» ՋՕԸ
Հրաչիկ Ջավադյան	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամ
Վանիկ Սողոմոնյան	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
Նազելի Վարդանյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, գլխավոր իրավախորհրդատու
Նորա Մարտիրոսյան	Իրավախորհրդատու, Կառավարման խորհրդի քարտուղար
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Նաիրա Ալբունյան	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Հայաստան
Լիլիթ Մնացականյան	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ

Նիստին ներկա էին նաև հետևյալ ՁԼՄ ներկայացուցիչները:

Նիստը նախագահելու համար առաջարկվեց ՇԽ անդամ Սեյրան Մարտիրոսյանի թեկնածությունը և հաստատվեց միաձայն: Նախագահողը դիտարկեց ներկայացված երկու լիազորագրերը և հավաստիացրեց, որ դրանք լիարժեք են և համապատասխանում են ՇԽ ընդունված Կոնանակարգին: Նախագահողը խոսեց «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում մայիսի 22-ին կայացած հանդիպման մասին. նա նշեց, որ հանդիպումը շատ արդյունավետ էր երկու կողմերի համար էլ: Ս. Մարտիրոսյանը բարձր գնահատեց իրականացնողների պատրաստվածությունը և կարծիք հայտնեց, որ նման հանդիպումները պետք է դառնան ՇԽ գործունեության հիմնական ուղենիշներից մեկը և լինեն շարունակական՝ ներառելով բոլոր բաղադրիչները:

Այնուհետև, նախագահողը ներկայացրեց օրակարգը և ՇԽ անդամներին առաջարկեց հաստատել այն: Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

Սկիզբը	Օրակարգի հարց	Կցվող փաստաթղթեր	Ձեկուցող/պատասխանատու
1. 15:00	ՇԽ նախորդ նիստից առ այսօր ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած առաջընթացի ներկայացում՝ ա) ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի աշխատանքներ բ) Կառավարման խորհրդի աշխատանքներ	Մայիսի 26-ի ԿԽ նիստի օրակարգ	- ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյան - ԿԽ անդամներ
2. 15:30	ՇԽ անդամ Ս. Ղազարյանի՝ Կառավարման խորհրդին անդամակցության դեպքում առկա շահերի բախում՝ - ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրավական կարծիքի ներկայացում - քննարկում	Տեղեկանք (ստորև կցվում է)	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու Նորա Մարտիրոսյան
3. 16:30	Այլ հարցեր ա) ՇԽ աշխատանքային պլան, առաջիկա գործողություններ		

Օրակարգի վերաբերյալ հանդես եկավ ՇԽ անդամ Ա. Ոսկանյանը և առաջարկեց ի գիտություն ընդունել «Ջրից դեպի շուկա» ծրագրի իրականացնողների հետ համատեղ

հանդիպման արդյունքները: Նա նաև առաջարկեց ՇԽ օգնականին զեկուցել ՇԽ անդամների՝ մինչ այժմ գումարված նիստերին բացակայության հարցի վերաբերյալ:

Նախագահողը ողջունեց Ա. Ոսկանյանի երկու առաջարկները և ձայնը տվեց ՇԽ օգնական Վ. Գրիգորյանին: Վերջինս ՇԽ անդամներին փոխանցեց հետևյալ տեղեկատվությունը՝

ՇԽ անդամ Ա. Սուքիասյանը տեղեկացրել է, որ ինքը հարգելի պատճառներով չի կարողանա մասնակցել ՇԽ նիստին, քանի որ ներգրավված է հանրապետական մասշտաբի միջոցառումների կազմակերպման գործում:

Լ. Ավագյանը բանավոր հայտնել է, որ ինքը հրաժարվում է ՇԽ անդամությունից և շուտով կներկայացնի նաև գրավոր դիմում:

Տ. Ղազարյանից տեղեկացել է, որ ինքը տեղյակ չի եղել նիստի անցկացման վերաբերյալ:

ՇԽ օգնականը նշեց նաև, որ պատրաստել է ՇԽ անդամների՝ նիստերին հաճախելու գրանցման թերթիկ և շուտով կտրամադրի այն:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանն առաջարկեց «այլ հարցերում» քննարկել ՇԽ կարգապահական հարցերը:

ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանը ողջունեց վերոնշյալ առաջարկությունը և առաջարկեց, որ ՇԽ անդամների մասնակցության վերաբերյալ զեկուցումները, այսուհետև, ներկայացվեն առաջիկա բոլոր ՇԽ նիստերի ընթացքում:

ՇԽ անդամ Ա. Ոսկանյանը նշեց, որ Կառավարման խորհրդի մայիսի 26-ի նիստում ԿԻ պատվիրակ Կ. Նազարյանն առաջարկել է Կառավարման խորհրդի նիստերին ներկայացնել Շահառուների խորհրդի աշխատանքները, ինչը հնարավորություն կտա հավաստի տեղեկատվություն ներկայացնել ՇԽ աշխատանքների վերաբերյալ, հատկապես, հաշվի առնելով այն փաստը, որ ԿԻ-ի այժմյալ կազմը նոր է: ՇԽ անդամ Կ. Նազարյանն ավելացրեց, որ դա հատկապես կարևոր է այն առումով, որ ԿԻ պատվիրակված ՇԽ անդամները հնարավորություն կունենան ներկայացնել ՇԽ մտահոգությունները և մոտեցումները այս կամ այն հարցի վերաբերյալ:

Նախագահողը ողջունեց ԿԻ պատվիրակված անդամների առաջարկությունը և խնդրեց առաջիկայում նման փորձ ունենալու դեպքում ներկայացնել:

ՇԽ անդամ Հ. Աբրահամյանն առաջարկեց «այլ հարցերում» ներառել նաև ՇԽ անդամներին վերջերս իր կողմից ուղարկված առաջարկության ներկայացումը և քննարկումը՝ ոռոգելի ջրերի սառեցման վերաբերյալ ակադեմիկոս Ռ. Համբարձումյանի ուսումնասիրության վերաբերյալ:

Նախագահողն առաջարկեց սկսել օրակարգային հարցերի քննարկումը՝ հաշվի առնելով վերոնշյալ բոլոր առաջարկությունները (դեմ արտահայտվելներ չեղան):

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի առաջընթացի արդյունքների ներկայացման համար ձայնը տրվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանին: Նա նշեց, որ ՇԽ նախորդ նիստից՝ (մայիսի 6, 2008) առ այսօր ընկած ժամանակահատվածում նշանակալի իրադարձություններ տեղի չեն ունեցել և ներկաների ուշադրությունը հրավիրեց հետևյալ փաստերի վրա՝

ՀՄՀ-Հայաստանի աշխատանքներն ընթացել է նորմալ հունով և չնայած այն փաստին, որ դեռ Գյուղական ճանապարհների վերականգնման(ԳՃՎ) ենթածրագրի առաջին փաթեթի շինարարական աշխատանքների մեկնարկի համար պահանջվող գումարը ՀՄԿ-ի կողմից դեռ չի ստացվել, ՀՄՀ-Հայաստանն արդեն պատրաստել է ԳՃՎ ենթածրագրի երկրորդ փաթեթի նախագծային աշխատանքները: Ա. Հովսեփյանը նշեց, որ արդեն բանակցություններ են սկսվել տրանսպորտի և կապի նախարարության հետ՝ ուղղված նրան, որպեսզի ՀՄՀ-Հայաստան ծրագրից դուրս մնացած ճանապարհների մի մասն ընդգրկվեն 2009թ. պետական բյուջեով նախատեսված ճանապարհաշինական աշխատանքների շրջանակներում: Հաշվի առնելով ԱՄՆ դոլարի արժեզրկումը և շինարարական նյութերի թանկացումները՝ «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագիրը ներկայումս վերանայման փուլում է, վերջնական տվյալները հայտնի կդառնան հունիս ամսվա վերջերին:

Ծրագրի ծավալների փոփոխման վերաբերյալ ծավալվեց քննարկում. ՇԽ անդամ Կ. Նազարյանը հայտնեց իր մտահոգությունը, որ նախկինում խոսվել է այն մասին, որ անկախ ամեն ինչից ծրագիրը կիրականացվի ամբողջությամբ, իսկ վերջին ԿԽ նիստում մոտեցումն այն էր, որ խնդիրն առկա գումարների՝ որքան հնարավոր է արդյունավետ օգտագործումն է: Նա խնդրեց Ա. Հովսեփյանին պարզաբանել, թե որ դիրքորոշումն է որդեգրել ՀՄՀ-Հայաստանը:

Արա Հովսեփյանը նշեց, որ վերոնշյալ երկու տարբերակները ոչ թե հակասում, այլ լրացնում են միմյանց, մասնավորապես, ամեն ինչ արվում է, որպեսզի ծրագրից դուրս մնացած միջոցառումների իրականացումն ընդգրկվի պետբյուջե, սակայն մյուս կողմից ծրագրի փոփոխությունները և կրճատումները նույնպես անհրաժեշտ են, քանի որ ՀՄԿ ֆինանսավորման գումարը մնում է նույնը, իսկ դրա դիմաց կատարվելիք աշխատանքների ծավալը փոխվում և, որպես օրինակ, նշեց մոնիտորինգի և գնահատման պլանը, որը կիրառվում է միմիայն ՀՄԿ ֆինանսավորման ազդեցությունները չափելու համար:

Այս կապակցությամբ հանդես եկավ նաև ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանը և արտահայտեց այն կարծիքը, որ ՀՄՀ-Հայաստան ծրագիրը չի կրճատվում և չի փոփոխվում, այլ ծրագրի իրականացման համար առաջ են գալիս ֆինանսավորման նոր աղբյուրներ:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենին ուղղեց հետևյալ հարցերը՝

1. հարց՝ Կա արդյո՞ք ծրագրի փոփոխությունների նախնական տարբերակը:

պատասխան՝ Առայժմ մասնագետները աշխատում են և դեռ հանրային քննարկումների համար նախատեսված տարբերակը պատրաստ չէ:

2. հարց՝ Ծրագրի իրականացման համար այլ ֆինանսավորման աղբյուրներ հայթայթելու դեպքում, ի՞նչ եք կարծում, ավելի նպատակահարմար չէր լինի հավելյալ գումարների տնօրինումը հանձնել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին:

պատասխան՝ Եթե նման տարբերակ հնարավոր լինի, ապա միանշանակ կարելի է ասել, որ ծրագիրն ավելի արդյունավետ կիրականացվի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՄՀ մասնագետները քաջատեղյակ են բոլոր նախագծային աշխատանքներին, ծրագրի իրականացման առանձնահատկություններին և այլն:

Այնուհետև, նախագահողը ձայնը տվեց ԿԽ պատվիրակ Կ. Նազարյանին՝ ներկայացնելու Կառավարման խորհրդի աշխատանքները և քննարկված հիմնական հարցերը: Կ.

Նազարյանն առանձնացրեց հետևյալ կարևոր հարցերը և առաջարկությունները, մասնավորապես,

- որպես տեղեկատվության հասանելիության ապահովման մեխանիզմ չՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ներմուծել թեժ գիծ, քանի որ էլեկտրոնային կայքերը համայնքային բնակիչներին ոչ միշտ են հասանելի.
- Մոնիտորինգի և գնահատման պլանի վերանայման գործընթացում ՇԽ ներկայացվածության և մասնակցության բարձրացման անհրաժեշտությունը.
- Կառավարման խորհրդի և Շահառուների խորհրդի փոխադարձ համագործակցությունն ապահովելու համար առաջիկա ՇԽ նիստերին հրավիրել ԿԽ անդամներին և իրենց ներկայացնել ՇԽ գործունեությունը: Որպես սկիզբ Կ. Նազարյանն առաջարկեց հրավիրել կամ հյուրըկալվել չՀ նորընտիր Վարչապետի մոտ և քննարկել չՄՀ-Հայաստան ծրագրին առնչվող հրատապ հարցեր, հանդիպման ֆորմատը և օրակարգը կարելի է առաջիկայում որոշել:

ԿԽ պատվիրակ Ա. Ոսկանյանն իր կողմից ավելացրեց, որ, իր կարծիքով, մոնիտորինգի և գնահատման պլանի վերանայումը պետք է իրականացվեր ավելի ուշ, երբ ծրագրի բոլոր փոփոխություններն արդեն իրականացված լինեին:

Կառավարման խորհրդի կազմակերպական աշխատանքները բարձր գնահատեց ՇԽ անդամ (ԿԽ պատվիրակ) Ա. Հովհաննիսյանը և շնորհակալություն հայտնեց չՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին ինտերնետային կայքում ՇԽ իրադարձությունների մասին արագ արձագանք տրամադրելու համար:

ՇԽ անդամ Ա. Սաքունցը, վկայակոչելով Բաց հասարակության ինստիտուտի աջակցությամբ վերջերս իրականացված անկախ հետազոտության արդյունքների մասին զեկույցը (Թրանսփարենսի ինթերնեշենալ), առաջարկեց բարելավել գնումների և մրցութային գործընթացի թափանցիկության և անաչառության ապահովման գործընթացը, ՇԽ անդամների մասնակցությամբ մշակել հաշվետվողականության մեխանիզմներ, որոնք կկիրառվեն ԿԽ անդամների կողմից մրցութային գաղտնիք պարունակող հարցերը քննելիս:

ՉՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Հովսեփյանը, անդրադառնալով Թրանսփարենսի ինթերնեշենալի կողմից իրականացրած ուսումնասիրությանը, նշեց, որ դա եղել է անկախ զեկույց, որով ներկայացվել է իրականացնողների անհատական և սուբյեկտիվ կարծիքը չՄՀ-Հայաստանի կողմից կիրառվող գնումների գործընթացի վերաբերյալ: Մինչդեռ չՄՀ-Հայաստանն իր բոլոր մրցույթներն իրականացնում է համաձայն չՄԿ-ի և Համաշխարհային բանկի կողմից սահմանված նորմերի: ՉՄՀ-Հայաստանն իր կողմից հրապարակել է պատասխան նամակ՝ հասցեգրելով զեկույցում նշված կետերը. նամակը տեղադրված է չՄՀ-Հայաստանի վեբ-կայքում:

Վերոնշյալի կապակցությամբ ՇԽ անդամ Լ. Բարսեղյանն առաջարկեց չՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին առաջիկա մեկ-երկու ամիսների ընթացքում ներկայացնել տեղեկանք մինչ այժմ իրականացված բոլոր մրցույթների վերաբերյալ, մասնավորապես նշելով, թե ինչ մրցույթներ են իրականացվել, ինչ ընթացակարգով, ինչ գումարներով և այլն:

Վերջում, նախագահողն ափովեց և ողջունեց ներկայացված բոլոր առաջարկությունները, մասնավորապես, թեժ գիծի առաջարկությունը, տեղերում մոնիտորինգ անցկացնելը և

առաջիկա ՇԽ նիստերից մեկին ՀՀ Վարչապետ, ԿԽ նախագահ Ս. Սարգսյանին հրավիրելու գաղափարը. վերջինիս վերաբերյալ նա նշեց, որ առաջիկա նիստին կորոշեն հանդիպման անցկացման ձևաչափը և օրակարգը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

Նախագահողն առաջարկեց ՇԽ օգնականին ներկայացնել ՇԽ նախորդ նիստի արձանագրության այն հատվածը, որտեղ Ս. Ղազարյանը ներկայանում է իր դիքորոշում ԿԽ անդամության կապակցությամբ շահերի բախման հարցի շուրջ: Արձանագրվել էր, որ «հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և ծավալված բուռն քննարկումները՝ Ս. Ղազարյանը հրաժարվում է իր նորընտիր պաշտոնից այն պարագայում, եթե շահերի բախումը իրապես անխուսափելի է»: ՇԽ անդամներն արտահայտեցին իրենց կարծիքները և հարցերը ստեղծված իրավիճակի վերաբերյալ, որնոր ներկայացվում են ստորև՝

ՇԽ անդամ Վ. Համբարձումյանը հարցրեց, թե ինչու Ս. Ղազարյանը չէր հրավիրվել ԿԽ նախորդ նիստին, ինչին Ա. Հովսեփյանը (ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ) պատասխանեց, որ ՀՄՀ-Հայաստանը, որը պատասխանատու է Միջպետական Համաձայնագրի համապարփակ իրականացման համար, Ս. Ղազարյանի դեպքում արձանագրել է շահերի ակնհայտ բախում և հակասություն և իրեն իրավունք է վերապահել ՇԽ 5-րդ պատվիրակի հարցը ժամանակավորապես սառեցնել:

ՇԽ անդամ Կ. Նազարյանն արտահայտեց իր մտահոգությունը, որ շահերի բախման գաղափարը բերում է ծայրահեղությունների և ՇԽ անդամներից ոմանք դառնում են ոչ լիարժեք իրավունքներով օժտված անդամներ: Այս առիթով Ա. Հովսեփյանը նշեց, որ կոնկրետ դեպքերի դիտարկումը և քննարկումը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ շահերի բախման բոլոր հնարավոր դեպքերը չեն սահմանվի ՇԽ կանոնակարգում:

ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանը մյուս անդամների ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի այն դիրքորոշումը, որով վիճարկվում է ՇԽ ընդունած որոշումը, ՇԽ կանոնակարգում որևէ կերպ սահմանված չէ և պետք է դա հաշվի առնել հետագայում կանոնակարգելու նպատակով: Ա. Հովհաննիսյան նաև կոչ արեց ՇԽ անդամներին անհապաղ նախաձեռնել ՇԽ կանոնակարգի վերանայման գործընթացը, որտեղ վերջնականապես կսահմանվի շահերի բախումը:

Շահերի բախման դեպքերը հայտաբերելու և սահմանելու վերաբերյալ ՇԽ անդամ Ա. Սաքունցն արտահայտեց այն մտեցումը, որ Կառավարությունը պետք է իր վրա վերցնի այդ պարտավորությունը և առաջիկայում սահմանի հստակ մեխանիզմներ:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը կոչ արեց նիստի մասնակիցներին որքան հնարավոր է շուտ լուծում տալ հարցին, քանի որ քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցչի բացակայությունը թուլացնում է ՇԽ ներկայացվածությունը որոշումների կայացման գործընթացում:

Առաջարկություններ՝

Նիստի նախագահող Ս. Մարտիրոսյանն առաջարկեց հարցը համարել փակված և նշանակել նոր ընտրություններ, քանի որ, համաձայն արձանագրության, Ս. Ղազարյանը հրաժարվում է իր անդամությունից, նախապայմանով, եթե շահերի բախումն անխուսափելի է, իսկ այս պարագայում ՀՄՀ-Հայաստանի իրավաբանները հաստատում են, որ դա այդպես է:

ՇԽ անդամ Ա. Սաքունցն առաջարկեց ի գիտություն ընդունել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրավական կարծիքը և անվավեր ճանաչել ՇԽ որոշումը:

ՇԽ անդամ Կ. Նազարյանն առաջարկեց ի գիտություն ընդունել ՊՈԱԿ-ի կարծիքը, սակայն քվեարկությունը հետաձգել մինչև հաջորդ նիստ Տ. Ղազարյանի ներկայությամբ հարցը քննարկելու նպատակով:

ՇԽ անդամ Լ. Բարսեղյանն առաջարկեց Տ. Ղազարյանի հետ սպահովել էլեկտրոնային կապ և մինչև քվեարկությունը ծանոթանալ իր կարծիքին:

Քննարկման արդյունքում ՇԽ ներկա անդամները որոշեցին ի գիտություն ընդունել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կարծիքը՝ Տ. Ղազարյանի ԿԽ անդամության դեպքում շահերի բախման վերաբերյալ և վերջնական որոշումը՝ նոր անդամի ընտրության հարցում, ընդունել ՇԽ առաջիկա նիստին:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ

Կարգապահական հարցեր

ՇԽ անդամները դիտարկեցին ՇԽ նիստերին անդամների հաճախելիության գրանցման թերթիկը: Արձանագրվեց այն փաստը, որ ՇԽ մի շարք անդամներ ունեն 2 և ավելի հաջորդական բացակայություններ. համաձայն ՇԽ կանոնակարգի 2 անընդմեջ բացակայությունները կարող են հիմք ծառայել ՇԽ անդամությունից զրկելու համար:

Նիստի նախագահողը կարծիք հայտնեց, որ այս անգամ ՇԽ-ը պետք է սահմանափակվի դիտողությամբ հաճախ բացակայող անդամներին, քանի որ առաջին անգամ է դիտարկվում կանգապահության հարցը: ՇԽ մյուս անդամները համաձայնեցին:

Ջրից դեպի շուկա ենթածրագիր

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյանը նշեց, որ սկսած հունիս ամսվա սկզբից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը յուրաքանչյուր շաբաթ իրականացնելու է առնվազն մեկ արտագնա հանդիպում դեպի ծրագրի իրականացման տեղամասեր և առաջարկեց ՇԽ անդամներին միանալ այցելություններին: ՇԽ անդամները ողջունեցին այցելություններ իրականացնելու առաջարկությունը:

Այլընտրանքային ոռոգում ջրի սառեցման տարբերակով

ՇԽ անդամ Հ. Աբրահամյանը ներկայացրեց ակադեմիկոս Ռ. Համբարձումյանի կողմից իրականացված աշխատությունը, որտեղ ներկայացվում է այլընտրանքային ոռոգման համակարգը: Ոռոգման նոր ուղղությունը, որ կիրառվում է սակավ ջրային ռեսուրսներով երկրների համար, ջրի սառեցման մեթոդն է, և այն Հայաստանում կարելի է կիրառել, օրինակ, Արագածի լանջին գտնվող լճերից մեկում:

Հ. Աբրահամյանն առաջարկեց առաջիկայում անցկացնել հանդիպում համապատասխան մասնագետների մասնակցությամբ: ՇԽ անդամները հավանություն տվեցին առաջարկությանը և հանձնարարեցին ՇԽ օգնականին համակարգել հանդիպման անցկացումը:

Այլ հարցեր

ՇԽ անդամ Կ. Նազարյանը ևս մեկ անգամ բարձրացրեց տարբեր երկրներում գործող Շահառուների խորհրդների միջև համագործակցության հարց, մասնավորապես, առաջարկեց առաջիկայում այց կազմակերպել ՀՄՀ-Վրաստան՝ փորձի փոխանակման նպատակով:

Նախագահող՝

Ս. Մարտիրոսյան

Քարտուղար՝

Վ. Գրիգորյան

27-ը մայիսի, 2008

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Շահառուների խորհրդի մայիսի 6-ի նիստի ընթացքում բարձրացված՝ շահառուների խորհրդի անդամ Տոնական Դևադյանի շահերի բախման առկայության վերաբերյալ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրավական կարծիքի տրամադրման մասին

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն կազմակերպել է «Ռոռզման համակարգերի կառավարման կազմակերպությունների կառուցվածքային ամրապնդում» առաջադրանքի իրականացման համար խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթը: Մրցույթն արդեն իսկ ավարտված է և ներկայումս ընթանում են բանակցություններ պայմանագրի ստորագրման շուրջ:

Առաջադրանքի հիմնական նպատակներն են՝

- Ամրապնդել 2001 թ. սկսած կազմակերպական բարեփոխումները և օգնել Հայաստանի ռոռզման ենթակառուցվածքի համար պատասխանատու ջրի կառավարման կազմակերպություններին արդյունավետորեն շահագործել և պահպանել ռոռզման ենթակառուցվածքը և ապահովել ջրի հուսալի ու ժամանակին մատակարարումը, ինչպես նաև ամրապնդել ֆերմերների մոտ ջրամատակարարման համակարգի նկատմամբ սեփականատիրոջ զգացումը (նաև ջրամատակարարման ծառայությունների դիմաց վճարելու պատրաստակամությունը):
- Հզորացնել ՋՕԸ-երի կազմակերպական, վարչարարական և գործառնական կարողությունները և հիմքեր ստեղծել ՋՕԸ-երի միությունների հիմնադրման համար:
- Ստեղծել առնվազն մեկ փորձնական ՋՕԸ-երի միություն և դրա արդյունքում բարելավել ջրամատակարարման համակարգը, ինչպես նաև զանձումների շոշափելի աճ ունենալ ՋՕԸ-երից և անդամ ֆերմերներից:
- Ուղեցույցեր մշակել և պայմաններ ստեղծել մասնագիտական ռոռզման ասոցիացիայի հիմնադրման համար, որը կներկայացնի ՋՕԸ-երի շահերը օրենսդրական և կանոնակարգման հարցերում:
- Օգնել մշակել Ռոռզման մասին օրենքի նախագիծը (Ջրային օրենսգրքի ենթա-օրենք), որի նպատակն է կարգավորել հարաբերությունները ռոռզում իրականացնող կազմակերպությունների միջև:

Վերոնշյալ նպատակների իրականացման համար խորհրդատվական ընկերության կողմից իրականացվող աշխատանքները պայմանականորեն բաժանված են հետևյալ հինգ գործողությունների խմբերի՝

1. Ջրօգտագործողների ընկերությունների ամրապնդում: Վերապատրաստում և տեխնիկական աջակցություն ՋՕԸ-երի կազմակերպմանը, կառավարմանը և արդյունավետությանը նպաստելու նպատակով՝ հարթ և թափանցիկ ընթացակարգերի, ավելի ներկայացուցչական կառավարման, անդամների ավելի մեծ մասնակցության և ընդգրկուն անդամության միջոցով:
2. Պատասխանատվությունների պարզաբանում և բաշխում ՋՕԸ-երի և Ռոռզում-Ջրառի ՓԲԸ-ի միջև համաձայն Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ՌՀՁԾ-ով սկսված բարեփոխումների, ինչպես նաև Ռոռզում-Ջրառի ՓԲԸ-ի ամրապնդում՝ հնարավորություն տալու վերջինիս կատարել իր գործառնությունները և գործել որպես ռոռզման ենթակառուցվածքի շահագործման և պահպանման գործընթացի ղեկավար և ՋՕԸ-երին օգնող կառույց:
3. Ջրօգտագործողների ընկերությունների միությունների հիմնադրման կառուցվածքային և իրավաբանական ուղեցույցերի մշակում և ցուցադրական միության հիմնադրում:

4. Մասնագիտական ոռոգման ասոցիացիայի զարգացման հիմքերի մշակում և դրա գործառնական կարողությունների կառուցում:
5. Ոռոգման մասին օրենքի նախագծի մշակում:

Տեխնիկական առաջադրանքը պարունակում է վերոնշյալ հինգ գործողությունների մանրակրկիտ նկարագրություն:

Շահերի բախման հարցը պարզաբանելու համար կանդիդատներն այդ նկարագրության որոշակի կետերին: Մասնավորապես, խորհրդատուն պետք է՝

- Կատարի առանձին ՋՕԸ-երի կարիքների՝ այդ թվում վերապատրաստման, տեխնիկական աջակցության և սարքավորումների կարիքների մանրամասն գնահատում, եթե համակարգի շահագործումը և պահպանությունը ՋՕԸ-ն կատարելու է իր սեփական ուժերով, կամ ֆինանսական կարիքների գնահատում, եթե շահագործման և պահպանության միջոցառումները տրվելու են տեղական կապալառուներին, ինչպես նաև իրականացնի շահագործման և պահպանման հարցերով վերապատրաստում,
- Ի լրումն երկրի ներսի վերապատրաստման ծրագրի, պատրաստի ՋՕԸ-երի ներկայացուցիչների ուսուցողական ուղևորությունների առաջարկ՝ համանման ոռոգման ցանցեր և կլիմայական պայմաններ, ոռոգման համակարգում բարեփոխումների հաջող փորձ և արդյունավետորեն գործող ՋՕԸ-եր ունեցող երկրներ: Մասնակիցների թիվը կորոշվի կարիքների և առկա ռեսուրսների հիման վրա՝ որպես նպատակ ունենալով առնվազն մեկ մասնակից 52 ՋՕԸ-երից յուրաքանչյուրից: Ընդ որում ուղևորությունների բյուջեն տրամադրվելու է ՀՄՀ-Հայաստան ծրագրի բյուջեից,
- ՋՕԸ-երին տրամադրվում է աջակցություն / սարքավորումներ, որպեսզի որոշվի նրանց կողմից շահագործման և պահպանության պարտականությունների լավագույն կատարելու մոտեցումը: Մեկ տարբերակ կարող է լինել ձեռք բերել սարքավորումներ, գործիքներ և շահագործող մեխանիզմներ ՋՕԸ-երի համար, որոնք վերջիններս կօգտագործեն իրենց պատասխանատվության տակ գտնվող ոռոգման ենթահամակարգերի շահագործման և պահպանման համար: Մեկ այլ տարբերակ կարող է լինել միջոցներ ստանալ ծրագրի շրջանակներում այդ շահագործման և պահպանության աշխատանքները պայմանագրով դրսի կազմակերպություններին տալու համար:

Իրավական հիմքեր.

1. 2006թ. մարտի 27-ին ՀՀ Կառավարության և Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի միջև ստորագրված Հազարամյակի մարտահրավեր համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) Հոդված 3-ի Բաժին 3.2-ի (Կառավարության պարտականությունները) բ/կետում սահմանված է, որ «Կառավարությունը կապահովի, որ անձինք կամ կազմակերպությունները չմասնակցեն ՀՄԿ-ի ֆինանսավորմամբ, ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ֆինանսավորվող պայմանագրերի, դրամաշնորհների կամ այլ գործարքի ընտրության, վարչարարության, վերահսկման գործում այն դեպքում, երբ (i) կազմակերպությունը, անձը, անձի անմիջական ընտանիքի անդամները, կամ բիզնեսի գործընկերները կամ այդպիսի կազմակերպության կամ անձի կողմից վերահսկվող կազմակերպություններն ունեն ֆինանսական կամ այլ շահագրգռվածություն կամ (ii) անձը կամ կազմակերպությունը բանակցում է կամ արդեն պայմանավորվել է սպազա աշխատանքի համար, եթե այդպիսի անձը կամ կազմակերպությունը գրավոր նախապես չի տեղեկացրել Կառավարությանը շահերի բախման մասին, և այդպիսի տեղեկացումից հետո Կողմերը գրավոր կերպով չեն համաձայնել շարունակել՝ չնայած այդպիսի բախմանը: Կառավարությունը կապահովի, որ անձինք կամ կազմակերպությունները, որոնք ներգրավված

են ՀՄԿ-ի ֆինանսավորմամբ, ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, ֆինանսավորվող պայմանագրերի, դրամաշնորհների կամ այլ գործարքների ընտրության, վարչարարության, վերահսկման գործում չպահանջեն կամ չընդունեն կամ չառաջարկեն կամ խոստում չտան երրորդ կողմին (ուղղակի կամ անուղղակի) իր համար կամ մեկ այլ անձի համար որևէ նվեր, շահ, արտոնություն, բացառությամբ փոքր արժեք ունեցող իրերի և այլնի, որը համապատասխանում է ՀՄԿ-ի կողմից ժամանակ առ ժամանակ հնարավոր ուղեցույցերին»:

2. Համաձայնագրի Հավելված 1-ի 4-րդ Բաժնում ամրագրված է կառավարման խորհրդի դերը և պարտականությունները, մասնավորապես Ա. կետի համաձայն «Կառավարման խորհուրդը պետք է վերահսկի Ծրագրի ընդհանուր իրականացումը և նշանակված իրավունքների և պարտականությունների կատարողականը»:

Վերոնշյալ երկու կետերից ակնհայտ է, որ Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհուրդն իրականացնում է վերահսկողական գործառնություններ և վերջինիս անդամները չպետք է ունենան ծրագրի հետ կապված ֆինանսական կամ այլ անձնական շահագրգռվածություն:

3. «Շենիկ» ջրօգտագործողների ընկերության կանոնադրության (այսուհետև՝ Կանոնադրություն) 5.3 կետի համաձայն վարչական խորհրդի բացառիկ իրավասություններից են հանդիսանում ընկերության ֆինանսական և հաշվապահական գործունեության համակարգումը, ընկերության գործադիր տնօրենին և գլխավոր հաշվապահին աշխատանքի ընդունելն ու աշխատանքից ազատելը:

4. Կանոնադրության 5.6 կետի համաձայն վարչական խորհրդի նախագահի իրավագործություններից մեկն է հանդիսանում վարչական խորհրդի կողմից ընդունված որոշումների ստորագրումը: Որից ակնհայտ է դառնում, որ վարչական խորհրդի նախագահ Տոնական Ղազարյանն անմիջական ներգործություն ունի ընկերության ղեկավար անձնակազմի և ֆինանսական միջոցների վերահսկողության նկատմամբ: